

ուր տոգոհ էին արդէն աղգայինք կաթողիկոսներու թուլամորթ եւ անկարգ ընթացքէն :

Ընդհանուր տոգոհութեան պոռտքումն է Գրիգոր Կեսարացւոյ թուղթն առ Մեղքիսեղեկ կաթողիկոս : Կեսարացին, որ մեծ եւ անմրցելի հեղինակութիւն կը վայելէր Արեւմտեայք քով, կանգնեցաւ պաշտպան իւր սանին՝ Մովսէս վարդապետին. եւ աներկիւղ, ազատադէմ բողոքեց այն ամէն անկարգութիւններու դէմ, որոնք կը գործուէին Արեւելք եւ դայթակղութեան առիթ էին Արեւմուտք : Ի մէջ այլոց կը գրէր Կեսարացի առ Մեղքիսեղեկ .

«Յերրորդ անկարգութիւն քո այս է, զի զոր ինչ վարդապետ, որ զճշմարիտն խօսի կամ վասն աստուածային օրինացն վրէժխնդրութեան զձեր օրինացն հակառակութիւն յանդիմանէ, ի վերայ նորա անփակ բերանով, անիրաւ լեզուաւ, յանդուգն դիմօք, լրբենի երեսօք եւ անկիրթ մտօք բանադրանաց գիր կու գրէք : Այս է ասելն ձեր, թէ զճշմարիտն մի խօսիք, որ մեր ստութիւնն ոչ յայտնեսցի. զօրէնս աստուածային մի ուսուցանէք, որ անօրէնութիւն մեր ոչ յանդիմանեսցի. զպատուիրանս աստուածային մի ծանուցանէք, որ մեր պատուիրանազանցութիւնն ոչ երեւի...» (Թորոս Աղբար. Բ., էջ 283—284) :

Այս թուղթը, որ կարեւոր վաւերագիր